

ՎԱՐԴԱՆ ՕՋՆԵՑՈՒ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴԱԿԱՆ ԳՐԱՌՈՒՄՆԵՐԸ

ՌՈՒՋԱՆ ՏԻՏԱՆՅԱՆ

Մաշտոցի անվան Մատենադարանի հավաքածուի 8822 համարի տակ պահվում է XIX դ. երկրորդ վեսի պատմագիր Վարդան Օձնեցու մի աշխատությունը՝ «Անցք Վարդան Արքեպիսկոպոսի Օձնեցույ և ճանապարհորդութիւն նորա ի Հայաստան, ի Տաճկաստան և ի Կիլիկիա» վերտառությամբ:

Աշխատության գրչության վայրն ու ժամանակը հավաստվում են հեղինակի իսկ վկայությամբ. «գծագրեալ իսկական ձեռամբ նոյն Արքեպիսկոպոսի սկսեալ ի 29-էն նոյեմբերի 1868 ամի ի վանս Սանահնայ»¹: Նախաբանում հեղինակը, խոսելով առհասարակ ճանապարհորդական գրառումների բնույթի մասին, նկատում է, թե աշխարհի գրեթե բոլոր ազգերը հետաքրքրվում և դբաղվում են իրենց երկրի ու ժողովրդի անցյալով, ուսումնասիրում նրա պատմությունը. մտավորականները, շրջագայելով երկրից երկիր, խնամքով գրի են առնում իրենց տեսածն ու լսածը՝ «յօգուտ ապագայից»: Օձնեցին դրում է, որ ինքը ևս հետևել է ուրիշների օրինակին և որոշել է ապագա սերունդներին թողնել նախնիների տոհմագրությունն ու իր հետ կապված առօրյա կարևոր իրադարձությունների պատմությունը, որոնք մեծապես առնչվում են ժամանակի պատմական, հասարակական, քաղաքական, մշակութային երևույթների հետ՝ «...և զոր ինչ տեսի և լուայ ի շրջագայութեանս իմում ի վերայ երկրի, թերևս ընթեռնելով յետագայքն իմ զգուշացին և շահեսցին յօգուտ իւրենց և ալլոց»²:

Հուշագրության գիտական նշանակության մասին ավելորդ է մանրամասն խոսել: Նշենք միայն, որ մեծ է նրա ճանաչողական արժեքը որպես պատմական սկզբնաղբյուր: Այդ բնագավառին նվիրված Կ. Դանիելյանի ուշագրավ աշխատության³ մեջ ընդգծված է XIX դ. հայ ուղեգրությունների առանձնահատուկ արժեքը: Այս առումով Օձնեցին, իրոք, փաստերի սոսկ նկարագրող չէ: Նա թե՛ պատմական իրադարձությունների և թե՛ իր ժամանակի անցքերի նկարագրության ժամանակ հանդես է բերում որոշակի վերաբերմունք, արտակարգ հետաքրքրություն իր ժողովրդի պատմական անցյալի, հուշարձանների, բնաշխարհի, կենցաղի, մշակույթի և առհասարակ հոգևոր կյանքի նկատմամբ: Վ. Օձնեցու արտաքուստ կենսագրական թվացող Ուղեգրությունը հագեցված է իր և նախորդ շրջանի հասարակական-քաղաքական կյանքի վերաբերյալ ուշագրավ տեղեկություններով: Այն միաժամանակ հնարավորու-

¹ Ձեռ. № 8822, էջ 23:

² Նույն տեղում, էջ 24ա:

³ Կ. Դանիելյան, Հայ մեմուարային գրականության պատմությունից, Երևան, 1966, էջ 215:

թյուն է տալիս վերականգնելու հայ մատենագրության վերջին ներկայացուցիչներից մեկի՝ իր իսկ Օձնեցու կյանքի հետաքրքրական պատմությունը: Պարզվում է, որ նա ծնվել է 1812 թ. Օձուն գյուղում, Արովյանների ընտանիքում. «որք էին ի հնումն աղատագեանք»⁴: Անդրադառնալով իր նախնիների քաղաքական անապահով վիճակին, Օձնեցին գրում է, որ նրանք վոլկասյան լեռնականների՝ լեզգիների, կողմից ենթարկվել են տեղական հարձակումների, որոնք ավերել են նրանց բնակավայր լոռին, հրի ու սրի մատնել բնակչությանը և նրանցից շատերին վաճառքի հանել Տուճկաստանի ու Պարսկաստանի շուկաներում: Նույն բախտն է վիճակվել Օձնեցու պապի՝ Եղիազար Արովյանի 7 որդիներից 5-ին: Եղիազարի այրին իր մնացած երկու որդիներին՝ Գրիգորի և Կիրակոսի հետ ապաստանում են Կողես կողովոլ գյուղում մինչև «յաւերումն գիւղօրէիցն Կօղեսայ և Եղիտանքայ ի վոլկասականաց»⁵: Այնուհետև, Օձնեցու նախնիները ստիպված փոխադրվում են Բարանա, ազգականների մոտ, մնալով այնտեղ «ցաւուրս աւերման Տփիսի քաղաքի ի ներքին Մահամադ շահէն Պարսից»⁶: Լոռեցիների տեղից տեղ գաղթելը վ. Օձնեցին իրավամբ «բացատրում է ժամանակի քաղաքական անապահով վիճակով: Պատմական իրողութիւնն է, որ նշված ժամանակամիջոցում Լոռու բնակչության համար մեծ չարիք էին ոչ միայն լեզգիների հարձակումները, այլև պարսից Աղա Մուհամադ խանի կողմից սպառնացող արշավանքը: Բազմաթիվ հայկական սկզբնաղբյուրներում ևս արձանագրված է, որ 1795 թ. պարսից արշավանքի նախօրեին Լոռու բնակիչները Ղազարի բնակչության հետ միասին շարժվում էին դեպի Թիֆլիս՝ փրկելու հույսը կապելով վրաց քաղաքացիության հետ»:

Իր մանկության դառն օրերի մասին Օձնեցին գրում է. «Մայրն իմ դժբախտ Ռիփսիմէ Միսկար Սարգսեան ստեամբ իւրով կերակրէր զիս և սնուցանէր յոյժ նեղսակրութեամբ, յամենայն գիշեր օրօրոցն առեալ յուս պահպանէր զիս յամրոցն Օձնոյ ի մէջ խառն ամբոխի, ուր լալով անհանգիստ առնէի զմայրն իմ»⁷:

XVIII դ. 90-ական թվականներին ծանր էր Արևելյան Վրաստանի վիճակը, որի ազդեցության ոլորտում էր գտնվում Լոռին: Ներքին ռեակցիան ու պարսկական ագրեսիան, վրաց թագաժառանգների անհամաձայնությունները, հաճախադեպ դավաճանությունները, Պարսկաստանի ու Թուրքիայի չորամամբ լեռնականների՝ անընդմեջ հարձակումները և, վերջապես, Աղա Մուհամադ խանի կողմից սպառնացող ահավոր վտանգը խիստ քայքայել էին Վրաստանի ներքին կյանքը: Ուստի, վրաց Հերակլ II արքան իր պետությունը վերահաս վտանգից փրկելու միակ հույսը կապում էր Ռուսաստանից օգնություն հայցելու ու վերջինիս հովանավորությունն ընդունելու մեջ: Այդ առիթով Օձնեցին գրում է, որ Հերակլը «յանձնեաց զերկիրն տէրութեան իւրոյ կայսերն ոռնաց, որոյ զօրքն հազիւ մտին ի Վրաստան սկիզբն ինն և տասն-

⁴ Զեռ. № 8822, էջ 25ա:

⁵ Օձնեցին նույնպես հավաստում է այս փաստը: Նա գրում է, որ իր հայրը՝ Գրիգոր Եղիազարի Արովյանը, այդ ժամանակ ունենում է 3 զավակ, որոնցից կենդանի է մնում միայն 6-ամսյա Մարիամը, որին և վերցնում ու Ղազարի բնակչության հետ փախչում է Թիֆլիս:

⁶ Զեռ. № 8822, էջ 26ա:

րորդ դարուն»⁷։ Իսկ թե ինչպիսի խաղաղություն էր տիրում հայոց ու վրաց երկրներում ռուսների Անդրկովկաս մտնելուց հետո, երևում է հետևյալ տողերից. «...և հետ զհետ է կարճեցին ղմարդագողութիւնս ղեկաց աշխարհէն հայոց և վրաց...»⁸։

Օձնեցին սկզբնական կրթությունը ստացել է հայրենի գյուղում, իր անդամակնիկ եղբոր՝ Ղազարի, մոտ։ 1824 թ. մահանում է նրա եղբայրը, ինքը մնում է «ոչ ուսեալ և ոչ անուս...», սակայն ուսումը շարունակելու միտքը նրան հանգիստ չի տալիս։ Ստանալով հոր համաձայնությունը, 1831 թ. Օձնեցին մտնում է Սանահնի վանքը։ Բայց այստեղ նրա սպասելիքները չեն իրականանում։ Սակայն այդ ժամանակ Սանահնի վանքի վանահայր է կարգվում Սարգիս վարդապետը (Հասան Զալալյան), այդուհի էլ և նա ուսայ զարհեստ քերականութեան և ճարտասանութեան անդ ի վաճառ Սանահնայ, որով լցաւ իմ փափաղ տենչանաց ուսման»⁹, — դրում է Օձնեցին։

1848 թ. Եգոստոսին, Ներսես Աշտարակեցու պահանջով, Օձնեցին մեկնում է Էջմիածին։ Սակայն, ինչպես քննվող աշխատությունից, այնպես էլ Օրմանյանի «Ազգապատմից» հայտնի է, որ Օձնեցին, ի թիվս այլոց, մեղադրվում էր եկեղեցական եկամուտների յուրացման մեջ, որի պատճառով Աշտարակեցին նույնիսկ բռնագրավում է նրա 44 ձեռագիր մատյաններն ու բազմաթիվ տպագիր հատորները։ 1848 թ. Օձնեցին արդեն Կաթսում էր, ապա Կաթինում, որից հետո մեկնում է Կ. Պոլիս։ 1850 թ. նոյեմբերին իր ձեռքի տակ ունենալով Կ. Պոլսի պատրիարքի և արքունի վառդապետ Տատյանի հանձնարարական նամակը՝ հասցեագրված Սսի Միքայել կաթողիկոսին, նա ճանապարհվում է Կիլիկիա, ուր ամիսներ շարունակ շրջում է տեղի հայաբնակ վայրերում, ուսումնասիրում գյուղերն ու քաղաքները, ուշագրավ գրառումներ կատարում բնակչության էթնիկական կազմի, զբաղմունքի, մշակութային կյանքի, ճարտարապետական հուշարձանների մասին։ Նա հավաքում է բազմաթիվ վիճակագիր արձանագրություններ, ձեռագրերի հիշատակարաններ և այլն¹⁰։ Օձնեցու ուղեգրության՝ Կիլիկիային նվիրված մասը անվիճելիորեն պատմագիտական ուղղակի հետաքրքրություն է ներկայացնում։ Օրինակ, արժեքավոր է նրա տեղեկությունն այն մասին, որ ինքը Սսի Մատենադարանի գրչագրերից ընդօրինակել է Մխիթար Գոշի նամակն՝ ուղղված Զաքարի և Իվանի հայոց ու վրաց սպասալարներին։ Օձնեցին նամակի մի օրինակը հանձնել է Պոլսի Ամենափրկիչ Հիվանդանոցի թանգարանին։ Սակայն Միքայել Զամչյանը ինչ-ինչ պատճառով իր «Պատմություն հայոց» աշխատության մեջ չի հիշատակում այդ մասին։ Հայտնի է, որ Գոշի հիշյալ նամակը տպագրվել է «Արարատ» հանդեսում, 1900—1901 թթ.։ Արդ, եթե այդ տպագրությունը Օձնեցու ընդօրինակության հիմքի վրա չի կատարվել, ապա

7 Նույն տեղում, էջ 25բ։

8 Նույն տեղում։

9 Նույն տեղում, էջ 28բ։

10 Խոսելով Կիլիկյան Հայաստանի պատմության ուսումնասիրության հարցի մասին, «Հայկական Կիլիկիա-տեղագրություն» մենագրության հեղինակ, դոկտոր Հ. Տեր-Ղազարյանն ասում է հայտնում, որ Կիլիկիան դեռևս չունի իր Մանանդյանը կամ Աղոնցը, որոնք քննական հայացքով վերհանելին Կիլիկիայի հայկական թագավորության պատմությունը։ Գնահատելով հանգերձ Վ. Ալիշանի հույկապ գիրքը, հեղինակը գրում է, թե այն պատրաստված է կիլիկաբնակ այն հայերի հետ թղթակցելով, որոնք վանքերի տեղն ու շրջանը գրել են մեծ պատմագիրն, ինչ որ լսել են ուրիշներից և կամ մոտակա վայրերի անունները տալով գրհացել են։

Նրա վկայությունը լրացուցիչ հաղորդում է Գոշի հիշյալ նամակի մի այլ ընդօրինակության գոյության մասին: Ուշագրավ է նաև այն, որ առ այսօր միակն է Օձնեցու այն տեղեկությունը, թե եվրոպացիները, Սսի Միքայել կաթողիկոսի թույլտվությամբ, 1848 թ. Անարդարայից տարել են մարմարակերտ մի արձան:

Անցյալ դարի 50-ական թվականների Սսի կաթողիկոսարանի բոլոր կիսովեր շինությունները, Օձնեցու վկայությամբ, վերանորոգվել են Կիրակոս Ա. Աջապահյան կաթողիկոսի ջանքերով: Սակայն այդ բարենորոգումները օսմանյան կառավարությունը դիտել է իբրև իրեն սպառնացող վտանգի ուժեղացում: Թուրքական գործակալների ամբաստանությունները հեղեղել էին սուլթանի պալատը, իսկ պաշտոնյաների կասկածները հասել էին անասելի չափերի (իբր Կիրակոս կաթողիկոսը, կապ հաստատելով ռուսական ցարի հետ, գաղտնի դավադրություն էր կազմակերպել օսմանյան կառավարության դեմ): Նույն կաթողիկոսի նկատմամբ ստեղծած բանսարկությունների կապակցությամբ Բաբկեն Կյուլեսերյանը գրում է. «40.000 ղազախներ ալ եկած են գաղտնի ճանապարհով գետնի տակ և Կիրակոս կաթողիկոսը ասոր համար Սսի մեջ պատրաստել է բերդ մը պարսպապատ և խրամատ»¹¹: Սուլթանը որոշում է գլխատել Կիրակոս կաթողիկոսին, սակայն պատրիարքի և հայ մեծատունների միջնորդության ու կաշառքի շնորհիվ հաջողվում է կասեցնել այդ վճիռը: Ի վերջո, նա հյուրասիրության քողի տակ թունավորվում է Ղազան օղլի ցեղապետի ձեռքով:

Կիլիկիայում ընդօրինակած Օձնեցու վիմագրերի մեջ մեծ թիվ են կազմում հիշյալ կաթողիկոսին նվիրված չափածո ստեղծագործությունները, որոնցում փառաբանված են նրա բարեգործությունները:

35 օր մնալով Սսի կաթողիկոսաբանում, Վ. Օձնեցին շարունակում է իր ճանապարհորդությունը՝ անցնելով Հաճն, Ուռումլի, Թումարզա և այլ գյուղերով ու գյուղաքաղաքներով և բազմաբնույթ արժեքավոր տեղեկություններ արձանագրում այդ վայրերի մասին:

Պատմագրությունից հայտնի է, որ Կեսարիան հռոմեական ու բյուզանդական շրջանում եղել է 400 000 բնակչությամբ քաղաք: Նրա հետագա անշքացման մասին Արշակ Ալսոյաճյանը գրում է. «Իր անշքացումը կսկսի իսլամական տիրապետության ենթարկվելին հետո, մասնավորապես օսմանյան իշխանության շրջանին, ուր հետզհետե անոր բնակչությունը կպակսի, բնական ու բռնական միջոցներով»¹²: Օձնեցու տվյալները Կեսարիայի հայ բնակչության թվի մասին կարևոր են, որովհետև տաճկական կառավարությունը միշտ էլ կեղծել է այն՝ հասցնելով նվազագույնի:

Կեսարիայում Օձնեցին ընդօրինակել է սուրբ Կարապետ վանքի բոլոր արձանագրությունները, որոնց համեմատությունը Տրդատ Պալյանի ու Արշակ Ալսոյաճյանի արտագրությունների հետ ցույց է տալիս, որ էական տարբերություններ գրեթե չկան:

1851 թ. հունվարին Վ. Օձնեցին արդեն Սեբաստիայում էր: Նրա վկայությամբ, այդ ժամանակահատվածում Սեբաստիայի հայ բնակչության թիվը

¹¹ Բ. Կյուլեսերյան, Պատմութիւն կաթողիկոսաց Կիլիկիոյ, Անթիլիաս—Լիբանան, 1939, էջ 548:

¹² Ա. Ալսոյաճեան, Պատմութիւն հայ Կեսարիոյ, հ. Ա, Գահիրէ, 1937, էջ 693:

33.000-ի էր հասնում: Այս մասին տեղեկություններ կան նաև Անդրիաս Ալեքսանդրյանի «Պատմություն ականավոր քաղաքին Սեբաստիոն» աշխատության մեջ, որը նույնական է Օձնեցու վկայության հետ: Սեբաստիայում Օձնեցին այցելում է սուրբ Աստվածածին եկեղեցին, հիանում նրա հրաշակերտ մարմարյա պատկերաքանդակներով: Ի դեպ, քանդակագործը Հովհան Դավազի անվամբ մի աղքատ հայազգի է եղել, որի հետ զրուցել է Օձնեցին:

Հայտնի է, որ Սեբաստիայի ձեռագրերի մեծ մասը մեզ չի հասել, ուստի ադ ձեռագրերից Օձնեցու ընդօրինակած հիշատակարանները մեծ արժեք են ստանում: Օձնեցուց շատ ավելի ուշ՝ Թորգոմ Գուշակյանը, որ հրատարակել է Սեբաստիայի ձեռագրերի ցուցակը, գրել է. «Իմ տրամադրության տակ ունիմ 283 ձեռագրաց ցուցակը: Այս ձեռագրերը այժմ գոյություն չունին ս. Նշան վանքին մէջ: Անոնք 1915-ին Սեբաստիոն հայ բնակչության տարագրության ժամանակ ցրվեցան կամ իսպառ ոչնչացան: Ինչ-ինչ բեկորներ միայն, ինչպէս կհավաստե ինձ պար. Սիրունի, հասած են Կ. Պոլիս, զանոնք Հայ արվեստի տունը ձեռք բերած է մեծագին ու այսպես փրկած կորստեն: Անշուշտ մաս մ'ալ անցած են օտարներու ձեռքեր, որոնք երևան պիտի գան ապագային»¹³:

Գուշակյանի հրատարակած և Օձնեցու ընդօրինակած հիշատակարանների մասնակի համեմատությունը ցույց է տալիս, որ վերջինս արտագրել է կրճատումներով, բաց է թողել «հիշեցեք»-ները: Այսինքն՝ նա արտագրել է առավել կարևոր դեպքերի բուն նկարագրությունը:

Դեռ Սեբաստիայում գտնված ժամանակ Վ. Օձնեցին Պոլսի հայոց պատրիարքից գրություն է ստանում իրեն Կաթինի հոգևոր թեմի առաջնորդ նշանակելու մասին: Այդ պաշտոնում նա մնում է երկու և կես տարի: 1853 թ. հոկտեմբերին օսմանյան 40.000-ոց բանակը Կարսից իջնում է Ախուրյանի ափը, դիրքավորվում Հոռոմոսի վանքի մոտ, ուր գտնվում էլ Օձնեցին: Ռուսական հրամանատարությանը հայտնի է դառնում Օձնեցու իրենց նկատմամբ ունեցած համակրանքը: Հրամանատարությունը խնդրում է նրան օսմանյան զինված ուժերի քանակի ու պատրաստության մասին տեղեկություններ հաղորդել:

Տեսնելով օսմանյան զորքերի առաջխաղացումը դեպի Շիրակ, Օձնեցին ծպտյալ հեռանում է Կարսից: Պոլիս տանող ճանապարհին, 1853 թ. նոյեմբերի վերջին, նա ակնատես է լինում բազմաթիվ ռազմական գործողությունների, այդ թվում՝ Սինոպ նավահանգստում օսմանյան ռազմանավերի խորտակմանը: Օձնեցին միաժամանակ վկայում է անգլիական ու ֆրանսիական զորքերի ու ռազմանավերի առկայությունը նեղուցում: Ահա նրա նկարագրությունը. «...վերջապէս հասաք ի Տրապիզոն քաղաք, տարան զմեզ զամենեւեան ի մաքրարանն (կարանտին), անդ լուաք զսկիզբն կոտորածին, որ ի կարանտինն ռուսաց Սոխում ղալէի, և ապա տեսաք զերեքտասան պատերազմական նաւս, որք չորս հազար ծովային զօրօք երթային ի Գուրիայի սահմանն՝ տանելով վասն նոցա վառօդ և գնդակս պատերազմի ապստամբեցուցանել ընդդէմ ռուսաց: Սոքա տարեալ յանձնեցին նոցա և դարձան ի նաւահանգիստն Սինոպայ, իբրև ի ծածուկ: Բայց լուեալ ռուսաց զայսպիսին

¹³ Թորգոմ Գուշակյան, Զուցակ հայերեն ձեռագրաց ս. Նշանի վանուց ի Սեբաստիա, Վիեննա, 1961, Առաջաբան:

հետամուտ լինին նոցա մետասան նաւուք և ոչ հասանին, հազիւ ի լուսանալ առաւօտուն տեսանին զնաւախումբն օսմանեանց դադարեալ ի նաւահանգրստին Սինոպայ, զորս անդէն կործանեցին փնդակաւ թնդանօթից, զմինն յորոց փախեալ զերծանի նոցանէ վիրաւոր, և տարաւ համբան շուժի կործանմանն:

Իսկ մեք յետ երկուց աւուրց այլ նաւաւ անցաք ի Սինոպ, տեսաք աչօք մերովք ի ծովու սուզեալքն: Հասաք ի Պօլիս 12 հոկտեմբերի, որոյ նեղուցն պահէին 24 նաւուք Անգղիացիք և Գաղղիացիք երեսուն հազար զօրօք»¹⁴, Տվյալ ժամանակաշրջանի Պոլսի քրիստոնյա բնակչության սպառնալից վիճակի մասին Օձնեցին գրում է. «մահամետական խուժանն բնաջինջ առնել խոստանայր զքրիստոնեայս մայրաքաղաքին»¹⁵, Հետևողականորեն խուսափելով պատերազմից, Օձնեցին խնդրում է Հակոբ պատրիարքին իրեն Սեբաստիա ուղարկել, Վերջինս ընդառաջում է նրա ցանկությանը և 1854 թ. մարտին Օձնեցին կրկին Սեբաստիայում էր: Մեկ տարի մնալով այնտեղ, նա հիմնականում զբաղվում է ձեռագրերի ուսումնասիրությամբ, արտագրում Մխիթար Գոշի հոգևոր բնույթի աշխատություններից մի քանիսը, ինչպես նաև՝ «Սկիզբն հաւատոյ ասացեալ տեառնէ Կոմիտասայ հայոց կաթողիկոսի» և «Կանոնք Մանասկերտի ժողովի» գործերը, որոնց մասին գրում է. «զայսոսիկ իբրև գաճաճ անկորուստ պահեցի առ իս և ունիմ»¹⁶:

1855 թ. Օձնեցին որոշում է վերադառնալ Արևելյան Հայաստան, Այդօրերին ռուսական զորքերը Ալաշկերտում էին: Կարինում նրան բանտարկում են իբրև ռուսական լրտեսի և հանձնում օսմանյան զինվորական խորհրդին, սակայն Կարինի Գրիգոր եպիսկոպոսի միջնորդությամբ նա ազատ է արձակվում:

1855 թ. հոկտեմբերին Օձնեցին գալիս է Կարսի մոտի Զիթլի Ղալա կոչվող գյուղը, ուր գտնվում էր Մուրավևի բանակը: Նրա այստեղ գալու մասին տեղեկացնում են փոխարքային: Վերջինս իր մոտ է հրավիրում Օձնեցուն և թարգմանիչ Լոռու Մելիքյանց (Միքայել Տարիելյանի) ներկայությամբ հարցաքննում նրան, իմանալու «զորպիսութենէ և զորքանութենէ պատերազմի և զօրաց օսմանցուց և զպաշարաց զօրաց Կարսայ ամրոցի»¹⁷: Մուրավևը Լոռու Մելիքյանցին ասում է, որ Օձնեցու տեղեկություններն ավելի հավաստի են, քան իր ունեցած պաշտոնական տվյալները: Օձնեցին 16օր մնում է ռուսական բանակի բարձրաստիճան զինվորական Թովմա Գաբրիելյանի տանը, ապա Վասիլ Բեյրուդյանի հանձնարարականով ներկայանում ներսես Ատարաբեկեցուն: Ռուսական բանակի հրամանատարությունը զգուշացնում է նրանում գտնվող Արսեն Գեղամյանին, որ եթե կաթողիկոսը որոշի Օձնեցուն Տաճկաստան փախչելու համար պատժել, ապա այդ մասին անմիջապես տեղյակ պահի իրեն:

Զբիմի պատերազմի կովկասյան ռազմաճակատի մասին Օձնեցին ունի նաև մեկ այլ աշխատություն, որը պահվում է նույն՝ № 8822 ձեռագրում և կոչվում է «Յաղագս պատճառանաց բացման պատերազմին ռուսաց ընդ օսմանցիս»:

¹⁴ Զեռ. № 8822, էջ 76բ:

¹⁵ Նույն տեղում:

¹⁶ Նույն տեղում, էջ 77ա:

¹⁷ Նույն տեղում, էջ 81ա:

Այսպիսով, Վ. Օձնեցու Ուլեգրոթյունը կարևոր սկզբնաղբյուր է մեր ժողովրդի ոչ հեռավոր անցյալի պատմության շատ ու շատ հարցերի լուսաբանման առումով, իսկ կովկասյան հրամանատարության արտակարգ ուղադրությունը Օձնեցու նկատմամբ, մեր կարծիքով, պետք է բացատրել նրա ողսական անվերապահ կողմնորոշմամբ, ինչպես նաև ողսական հրամանատարությանը մատուցած ծառայություններով:

, ПУТЕВЫЕ ЗАМЕТКИ ВАРДАНА ОДЗНЕЦИ

РУЗАН ТИТАНЯН

Р е з ю м е

Путевые заметки Вардана Одзнеци являются своеобразным образом мемуарной литературы. Вардан Одзнеци был в Киликии, дал подробное описание этнического состава населения, исторических памятников, находящихся на ее территории. Одзнеци изучал рукописи Сисского каталикосата, переписал многочисленные памятные записи, ряд важных документов и лапидарные надписи в стихи. Касаясь своей родословной, он отмечает неустойчивое социально-экономическое и политическое положение своих предков.

Вардан Одзнеци был свидетелем военных действий на Кавказском фронте в период Крымской войны.